# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Մեծամոր 17 դեկտեմբերի 2024թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-190/24» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով 2024 թվականի նոյեմբերի 13-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-190/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՎԻ ՔԵՅ ԻՆՋԻՆԵԻՐԻՆԳ» ՍՊԸ-ն, որը ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը:

Փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել է, որ «ՎԻ ՔԵՅ ԻՆՋԻՆԵԻՐԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի ամբողջական տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ :

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն «ՎԻ ՔԵՅ ԻՆՋԻՆԵԻՐԻՆԳ» ՍՊԸ-ին առաջարկվել է շտկել նշված անհամապատասխանությունները, սակայն մասնակցի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները: Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվել է չկայացած:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը՝ «ՎԻ ՔԵՅ ԻՆՋԻՆԵԻՐԻՆԳ» ՍՊԸ-ի հայտը գնահատեց հրավերի պահանջներին անհամապատասխան: Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվել է չկայացած:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՎԻ ՔԵՅ ԻՆՋԻՆԵԻՐԻՆԳ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «ՎԻ ՔԵՅ ԻՆՋԻՆԵԻՐԻՆԳ» ՍՊԸ-ին:

**Գլխավոր տնօրեն** **Է. Մարտիրոսյան**